

Հավասարեցում մեծագույնին

Տրված են երկու զանգվածներ՝ A և B , որոնք ունեն N երկարություն, և որոնց տարրերը դրական ամբողջ թվեր են: Ձեր նպատակն է A զանգվածը վերափոխել զանգված B -ի **SetMax** գործողության հաջորդական կիրառմամբ:

SetMax(L, R) գործողությունը՝

$(0 \leq L \leq R \leq N - 1)$ միջակայքի համար, A_L, A_{L+1}, \dots, A_R էլեմենտները դարձնում է հավասար դրանցից առավելագույնին՝ $\max(A_L, A_{L+1}, \dots, A_R)$:

Գրեք ծրագիրը, որը գտնում է **SetMax** գործողությունների այնպիսի հաջորդականություն, որը A -ն վերածում է B -ի, կամ արտածում է "-1", եթե նման հաջորդականություն գոյություն չունի:

Գործողությունների հաջորդականությունը չպետք է պարունակի ավելի քան N գործողություն: Գործողությունների քանակը մինիմիզացնել պարտադիր չէ:

Կարելի է ապացուցել, որ եթե հնարավոր է A զանգվածը վերածել B -ի **SetMax** գործողությունների օգնությամբ, ապա դա հնարավոր է անել առավելագույնը N գործողությունների միջոցով:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է $N(1 \leq N \leq 2 \cdot 10^5)$ թիվը: Երկրորդ տողում տրված են N հատ ամբողջ դրական թվեր՝ A զանգվածի տարրերը (բաժանված բացատներով): Երրորդ տողում տրված են N ամբողջ դրական թվեր՝ B զանգվածի տարրերը (բաժանված բացատներով): Այդ բոլոր թվերը գտնվում են 1 -ից 10^9 սահմաններում:

Ելքային տվյալներ

- Առաջին տողում ծրագիրը պետք է արտածի K ամբողջ դրական թիվ՝ գտնված գործողությունների հաջորդականության երկարությունը կամ "-1", եթե A -ն հնարավոր չէ վերածել B -ի:
- Եթե A -ն հնարավոր է վերափոխել B -ի, ապա հաջորդ K տողերում պետք է արտածել երկու ամբողջ թվեր L_i և R_i , որոնք

համապատասխանում են i -րդ **SetMax(L, R)** գործողության L և R պարամետրերին:

Օրինակներ

Մուտք	Ելք	Պարզաբանում
5 2 4 3 2 1 4 4 4 3 2	3 3 4 2 3 0 2	2 4 3 2 1 → 2 4 3 2 2 → 2 4 3 3 2 → 4 4 4 3 2
5 2 4 3 2 1 3 4 4 3 2	-1	Հնարավոր չէ A-ն վերափոխել B-ի

Ենթախնդիրներ

Համար	Սահմանափակում	Միավոր
0	Օրինակները	0
1	$1 \leq N \leq 300$	31
2	A-ն և B-ն բաղկացած են միայն 1 և 2 թվանշաններից	11
3	Լրացուցիչ սահմանափակումներ չկան	58